256 Որտե՞ղ ես թափառում, դժբախտ որդի՛

1. Որտե՞ղ ես թափառում, դժբախտ որդի՛
Քո հայրենի տնից հեռացած,
«Վերադարձի՛ր»,- հնչում է մի ձայն միշտ,
Որ կանչում է քեզ տուն հայրական:

Վերադարձի՛ր, ես քեզ կընդունեմ,
Վերադարձի՛ր, մեղքդ կվերցնեմ,
Սպիտակ հանդերձ նորից կհագցնեմ
Եվ մեծ ընթրիքին քեզ կտանեմ:

2. Ո՞ւր ես թափառում, կորցնում ժամանակ՝
Իզուր վատնելով քո ուժերը,
Ես մեռա խաչի վրա քեզ համար,
Վերադարձի՛ր, կվերցնեմ բեռդ:

3. Ո՞ւր ես թափառում խավար գիշերով,
Միայնակ, առանց հարազատի,
Վերադարձի՛ր քո տունը լուսավոր,
Կգտնես հանգիստ քո վշտերից:

4. Որտե՞ղ ես թափառում, սոված որդի,
Գիշերվա ցրտի, խավարի մեջ,
Վերադարձի՛ր այդ անպտուղ երկրից,
Իմ գրկի մեջ Ես քեզ կընդունեմ:

Վերադարձի՛ր, Ես քեզ կընդունեմ,
Վերադարձի՛ր, քեզ գիրկս կառնեմ,
Սպիտակ հանդերձ նորից կհագցնեմ
Եվ մեծ ընթրիքին քեզ կտանեմ: